Հարցաշարի գնահատման չափանիշները

IX դասարան

1-ին հարցի I-II ենթահարցերը՝ 1միավոր, II-ենթահարցը՝ 2միավոր, III-ը՝1մ:
2-րդ հարցի I-ենթահարցը՝ 2 միավոր, II-ենթահարցը՝ 2 միավոր
3- րդ հարցի I-ենթահարցը 2 ասույթի առկայության դեպքում(երկտող կամ քառատող)՝ 2միավոր, II-ենթահարց՝ ա-0,5, քառատողը՝1,5 միավոր
4-րդ հարցի I-ենթահարց՝ 1միավոր, II-ենթահարց՝ 3միավոր(1,5-1,5)
5-րդ հարցի I-II ենթահարցերը՝1միավոր, III-ը՝0,5,IV-ը՝2,5միավոր

Հարցաշարերի պատասխանները

IX դասարան

1.1902 թվականի աշունը չափազանց արգասաբեր եղավ մեծ լոռեցու համար: Թումանյանը հանգստանում էր Աբասթումանում. Հենց այդ փառահեղ աշնանն էլ նա մշակեց իր պոեմները և գրեց «Սասունցի Դավիթ» պոեմը: Բանաստեղծն այն գրել է փոքր տարիքի ընթերցողների համար՝ կամենալով դաստիարակել նրանց հայրենասիրությամբ, երախտագիտությամբ, մեծահոգությամբ, ազատասիրությամբ, գթասրտությամբ, խաղաղասիրությամբ: Բայց պոեմը իր գեղարվեստական մշակմամբ սիրելի է նաև մեծերին.այն իր գեղարվեստական մշակմամբ բարձրարժեք ստեղծագործություն է: Թումանյանը այն գրել է՝ օգտվելով Գարեգին Սրվանձտյանի, Մանուկ Աբեղյանի, Գարեգին Հովսեփյանի, Բագրատ Խալաթյանցի և այլոց՝ հրապարակի վրա եղած տպագրություններից (1874-1893թթ.):

Մելիք

Մելիք- սարսափ կալավ դև մելիքին
Էլ չեմ նըստիլ ես քու հացին
Դու տըմարդի, վախկոտ ու նենգ
Երեք հազար լիդր էր քաշում
Հըսկայական իր մըկունդը
Գուժեց գոռոզ Մըսրա արքան

Սարսափ կալավ գոռ Մելիքին,
Մահվան դողը ընկավ սիրտը,
Ու տապ արավ գոռոզ հոգին :

Դավիթ

Էնպես զարկեց ջաղացքարին՝ քարը եղավ հազար կըտոր
Մըռընչալով ելավ տեղից էն առյուծի առյուծ որդին
Իր ձին հեծավ ու փոթորկեց, խաղաց, շողաց Թուր-Կեծակին
Թըռավ, ցոլաց Դավթի հուր ձին ու ցած իջավ Թուր-Կեծակին
Դուք ըռանչպար մարդիկ…….հազար ու մի հոգսեր ունեք
Ի՞նչ եք առել նետ ու աղեղ, եկել թափել օտար դաշտեր

Ձանձրացե՞լ եք խաղաղ ու հաշտ հողագործի օր ու կյանքից.
Դարձեք եկած ճանապարհով…. Բայց թե մին էլ զենք ու զոռով,
Վեր եք կացել դուք մեզ վրա…… Կելնեն ձեր դեմ, ինչպես Էսօր
Սասմա Դավիթ, Թուր- Կեծակին:

Դավթի հետ համեմատվում են Աղասին, Խենթը, Թաթուլ իշխանը, ֆիդայիները, ազգային- ազատագրական պայքարի նվիրյալները:

2.Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» մատյանից օգտվել է Ռաֆֆին իր «Սամվել» պատմավեպը գրելիս: Օգտագործել է «Արշակ և Շապուհ» հատվածը:
Այդ հատվածի մասին կարծիքդ գրի՛ր՝ վերլուծելով հայոց և պարսից թագավորների կերպարները : Արդարացի՞ էր Շապուհը:

3.Խաղով եկավ, Ախով գնաց Սայաթ- Նովան.
Երգով եկավ, վերքով գնաց Սայաթ- Նովան
Սիրով եկավ, Սրով գնաց Սայաթ- Նովան. Սիրով մնաց Սայաթ- Նովան:
(Հովհաննես Թումանյան)

Ոսկի բառեր, անգին քարեր,լալ ու գոհար շարել ես դու,
Քեզ միայն քո յարն է վառել, քանի՞ յարեր վառել ես դու,
Ո՞ր շահն ունի Էսքան գոհար ու անգին քար, Սայա՛թ-Նովա,
Չի ունեցել քեզ պես շռայլ խալխը նոքար, Սայա՛թ- Նովա:
(Եղիշե Չարենց)

Քանի՞ տարի մեջլիսներում տա՞ղ ես ասել, Սայա՛թ- Նովա,
Քանի՞ տարի դու սրտերի հե՞տ ես խոսել, Սայա՛թ –Նովա,
Կարո՛տ բլբուլ, ամեն տարի եկել ես դու վարդերի հետ,
Ու սիրելո՞վ ու սիրվելով՝ մեզ ես հասել, Սայա՞թ- Նովա :
(Սիլվա Կապուտիկյան)

Մասիս սարը քեզ քամանչա, ձյունը՝ սադափ քարեր վրան,
Ոսկի Արազ, արծաթ Զանգու՝ միշտ հայախոս լարեր վրան….
(Հովհաննես Շիրազ)

Աշուղ-բանաստեղծը աշուղական երգերի ժանրային ձևերը ժառանգած, սակայն զուտ սեփական աշխարհը ստեղծած, անհատական- անձնական ընկալումների ճանապարհն ընտրած բանաստեղծն է, որի ոճն ու լեզուն նման չէ ոչ մեկին; Սայաթ-Նովան ստեղծել է միայն իրեն հատուկ պատկերներ, որոնք չենք գտնի ոչ մի աշուղի մոտ:

4. Միքայել Նալբանդյանը և Ռափայել Պատկանյանը, մեկ տարվա տարբերությամբ , ծնվել են Դոնի Ռոստով(Նոր Նախիջևան) քաղաքում, սովորել են հայտնի մանկավարժ Գաբրիել Պատկանյանի(Ռափայել Պատկանյանի հոր) դպրոցում: Գրել են հայրենասիրական թեմաներով

ստողծագործություններ. Միքայել Նալբանդյան «Ազատություն»,«Մանկության օրեր»,«Ապոլլոնին». Ռափայել Պատկանյան «Արաքսի արտասուքը»,«Օրորոցի երգը», «Վանեցի գեղջուկի տաղը»:

5.Սունդուկյանին «Մեծ Պեպո» է անվանել Հովհաննես Թումանյանը: Այդ առիթով Թումանյանը գրել է.«Ու անվերջ էն մեծ Պեպոն, կյանքի բեմի վրա մաքուր,հաղթական, Ձիմզիմովի դեմը կանգնած՝ իր հալալ աշխատողի կոշտ ձեռքը կզարկի մուրհակին և Թիֆլիսի բարբառով կորոտա- քո սրտո՞ւմն ինչ է գրած… ու կվարի իր ազնիվ կռիվը ոչ թե մուրհակի համար, այլ ճշմարտության համար, արդարության համար»: